## ԱՎԵՐԱԿՈՒՄ

Մոլոր, մենակ ես շըրջում եմ
Ավերակում հայրենի,
Աչք եմ ածում ու հիշում եմ
Անցած կյանքը վաղեմի։
Է՜, այստեղ էլ ժամանակով
Շեն ու կենդան է եղել,
Ուրիշ օրով, ուրիշ կյանքով,
Ուրիշ մարդիկ են ապրել։

Ահա նըրանց տեղ-տըները
Լուռ-լուռ փոսեր ցիրուցան,
Ահա նըրանց շիրիմները,
Մամռոտ, անշուք, աննըշան
Ահա մեծի ապարանքը
Ու ամրոցը կիսավեր,
Ահա նըրանց խաղաղ վանքը,
Աղոթում է կարծես դեռ...

Մթընշաղը գետինն առել,
Լուռ է աշխարհք-արարած.
Բեկորներին աչքերս հառել
Մըտածում եմ շըվարած։
Հին դարերի մըշուշի մեջ
Նըշմարում եմ ես ահա
Փարթամ քաղաք, տներ անվերջ...
Մեծ պալատներ... ու սըրահ...
Ու սըրահը ճոխ զարդարված
Վառվում է ուշ գիշերով...
Էն սըրահում, լուսավորված
Բյուրեղյա թանկ ջահերով՝

Հայրենիքի ազատանին
Հավաքվել է խընչույքի,
Տոն է տոնում, տո՛ն հաղթության
Իր հավատի ու զենքի…

Ու փափկասուն տիկիններըը
Հանդիսավոր ընթացքով
Ճեմ են առնում, աչք են ածում,
Սեր են թափում հայացքով։
Պարիկները պար են պարում
Ու տոփում են համարձակ,
Ու թընդում են մեծ սրբահում
Երգ ու նըվագ ներդաշնակ…

«Վո՛ւյ…», «վո՛ւյ…», բուն էր, վայեց ահա…
Մութն է։ Ու ես գըլխիկոր
Էն ավերակ քաղքի վըրա
Կանգնած, ինչպես մի բեկոր…